ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«16» նոյեմբերի 2021թ. № 397

ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՊՐԱՆՔՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ մասով, հաշվի առնելով Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ՝ Սերգեյ Դանիելյանի,Գուրգեն Վարդանյանի և Արամ Դարչինյանի՝ 2021 թվականի նոյեմբերի 11-ի զեկուցագիրը, Սպիտակի համայնքապետարանի վարչական շենքի պահպանման և ընթացիկ նորոգման համար անհրաժեշտ ապրանքներ ձեռք բերելու համար՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2021 թվականի բյուջեի «Օրենսդիր և գործադիր մարմիններ» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից հատկացնել 9 850 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. նոյեմբերի 16
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«16» նոյեմբերի 2021թ. № 398

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՐԿՂՆԵՐԸ ՀԱՄԱՐԱԿԱԼԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՊՐԱՆՔՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ մասով, հաշվի առնելով Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ՝ Սերգեյ Դանիելյանի,Գուրգեն Վարդանյանի և Արամ Դարչինյանի՝ 2021 թվականի նոյեմբերի 04-ի զեկուցագիրը, Սպիտակ համայնքում աղբարկղները համարակալելու համար անհրաժեշտ ապրանքներ ձեռք բերելու համար՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2021 թվականի բյուջեի Շրջական միջավայրի պաշտպանություն (Այլ դասերին չպատկանող) գործառական դասակարգման «Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» տնտեսագիտական դասակարգման 4252 հոդվածից հատկացնել 6 000 ՀՀ դրամ:
2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. նոյեմբերի 16
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«16» նոյեմբերի 2021թ. № 399

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՊՐԱՆՔՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ մասով, հաշվի առնելով Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ՝ Հայկ Սամվելյանի,Սերգեյ Դանիելյանի,Գուրգեն Վարդանյանի՝ 2021 թվականի նոյեմբերի 05-ի զեկուցագիրը, Սպիտակ համայնքի փողոցային լուսավորության համակարգի արդիականացման համար անհրաժեշտ ապրանքներ ձեռք բերելու համար՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2021 թվականի բյուջեի «Փողոցների լուսավորում» գործառական դասակարգման «Շենքերի և շինությունների շինարարություն» տնտեսագիտական դասակարգման 5112 հոդվածից հատկացնել 102 260 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. նոյեմբերի 16
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի քաղաքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ N 400

« 18 » նոյեմբերի 2021թ.

ՌՈԶԻ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ԵՎ ՆՎԱՐԴ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱՆԵՐ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածով, «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 8-րդ կետի 3-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի թիվ 962-Ն որոշման հավելվածի 4-րդ և 5-րդ կետերով, հաշվի առնելով, որ անչափահասներ Ռոզի Սասունի Մինասյանը և Նվարդ Սասունի Մինասյանը մնացել են առանց ծնողական խնամքի՝ ***որոշում եմ.***

1. Ռոզի Սասունի Մինասյանին, ծնված 2013 թվականի հունվարի 10-ին, և Նվարդ Սասունի Մինասյանին, ծնված 2015 թվականի սեպտեմբերի 3-ին, վերցնել սկզբնական հաշվառման՝ որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ:

2. Ռոզի Սասունի Մինասյանի և Նվարդ Սասունի Մինասյանի խնամքի իրականացումը ժամանակավորապես թողնել Սիրվարդ Միխայելի Մինասյանին և Մերի Ալբերտի Սարգսյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. նոյեմբերի ___
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«19» Հոկտեմբերի 2021թ. № 401

ԺԻՐԱՅՐ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2303658 վկայականը, Կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006UVIEPJA) և Ժիրայր Սերյոժայի Հովակիմյանի ներկայացուցիչ՝ Հայկանուշ Բագրատի Գաբրիելյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ժիրայր Սերյոժայի Հովակիմյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Շիրակի խճուղու վրա գտնվող, 06-006-0472-0003 կադաստրային ծածկագրով, 0,138 հա մակերեսով տնամերձ հողամասին, դրա վրա գտնվող 253 քմ մակերեսով բնակելի տանը և 64,2 քմ մակերեսով մառանին տրամադրել «ք.Սպիտակ, Շիրակի խճուղի, թիվ 157» հասցեն (փոստային դասիչը՝ 1802):
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2021թ. Հոկտեմբերի 19
ք.Սպիտակ